«ԱՅՈ» ՈՒՎԿ ՓԲԸ

2021թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան-2022

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 3
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 6
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 7
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 8
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 9
2021թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 10

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ
Երևան, Գյուլբենկյան 30/3, գրասենյակ 129
Հեռախոս՝ +374 10 229021, +374 60 529021
Էլ. փոստ՝ office@anaudit.am

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԱՅՈ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի միակ բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՅՈ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2021թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների ամփոփագիրը:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «ԱՅՈ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի առ 31 դեկտեմբերի 2021թ. ֆինանսական վիճակը և այդ ամսաթվին ավարտվող տարվա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ-ներ) համապատասխան:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների այս աուդիտի նկատմամբ կիրառելի անկախության և էթիկայի պահանջներին համապատասխան, և մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք համոզված ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար են ու համապատասխան, որպեսզի հիմք ապահովեն մեր կարծիքի համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության գործադիր ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական անճշտություններից (թե՛ սխալի, թե՛ խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հնարավորություն ընձեռելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս գործադիր ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կա՛մ լուծարելու Ընկերությունը, կա՛մ դադարեցնելու դրա գործունեությունը, կա՛մ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Ընկերության միակ բաժնետերն է պատասխանատու Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր նպատակներն են՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացող էական անճշտություններից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի գոյություն ունեցող էական անճշտությունը: Անճշտություններ կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև՝

- նույնականացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական անճշտության ռիսկերը, այդ ռիսկերից ելնելով նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են ապահովում մեր կարծիքի համար: Խարդախությունից առաջացող էական անճշտության չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալից առաջացողինը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության համակարգի մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների ու կից բացահայտումների հիմնավորվածությունը.
- եզրահանգում ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն կապված դեպքերի կամ պայմանների հետ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ առկա է էական անորոշություն, ապա մենք պետք է մեր աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդպիսի բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում, ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են ընդհուպ մինչև մեր աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ պայմանները կարող են պատճառ հանդիսանալ, որ Ընկերությունն այլևս չհամարվի անընդհատ գործող:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները պատկերում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվի ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք Ընկերության ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգի նշանակալի թերությունների մասին:

Սույն անկախ աուդիտորի եզրակացության համար հիմք հանդիսացած աուդիտի պատասխանատու ղեկավարն է՝

Գայանե Վարդանյան

Որակավորված աուդիտոր, ՀԳԳՀ 2 22 0668

Արթուր Հարությունյան, Որակավորված աուդիտոր, ՀԳԳՀ 2 20 0017

Տնօրեն

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ

Երևան

29 հունիսի 2022թ.

«Էյ-Էն Աուդիտ»
"ЭЙ-ЭН АУДИТ"
"A-N AUDIT"
01529594

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծան.	2021թ.	2020թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	7,405	16,127
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(2,371)	-
Զուտ տոկոսային եկամուտ		**5,034**	**16,127**
Այլ եկամուտներ	7	825	-
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ		(13,683)	(19,429)
Լիցենզիայի պետական տուրք և այլ պարտադիր վճարներ		(6,949)	(2,240)
Նյութական և ոչ նյութական ակտիվների մաշվածություն և ամորտիզացիա		(9,574)	-
Այլ գործառնական ծախսեր	8	(11,981)	-
Ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներից /հակադարձումից օգուտ (կորուստ)	10,11 12	1,707	15
Շահույթ (վնաս) նախքան շահութահարկով հարկումը		**(34,621)**	**(5,527)**
Շահութահարկի գծով փոխհատուցում (ծախս)	9	**5,472**	**823**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Շահույթ (վնաս) և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		**(29,149)**	**(4,704)**

Գործադիր տնօրեն

Տիգրան Բոստանջյան

Գլխավոր հաշվապահ

Աննա Կարապետյան

29 հունիսի 2022թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծան.	31.12.2021թ.	31.12.2020թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ	10	114,933	6,339
Բանկային ավանդներ	11	60,259	
Տրամադրված վարկեր	12	10,739	174,558
Օգտագործման իրավունքով ակտիվներ	13	31,533	-
Հիմնական միջոցներ	14	8,247	-
Ոչ նյութական ակտիվներ	15	5,750	-
Հետաձգված ծախսեր		4,000	4,000
Այլ ակտիվներ		581	-
Հետաձգված հարկային ակտիվ	16	8,195	2,723
Ընդամենը ակտիվներ		**244,237**	**187,620**
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություն	13	33,813	
Պահուստներ և այլ պարտավորություններ	17	2,941	988
Ընդամենը պարտավորություններ		**36,754**	**988**
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	18	250,000	200,000
Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)		(42,517)	(13,368)
Ընդամենը սեփական կապիտալ		**207,483**	**186,632**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**244,237**	**187,620**

Գործադիր տնօրեն
Տիգրան Բոստանջյան

Գլխավոր հաշվապահ
Աննա Կարապետյան

29 հունիսի 2022թ.

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)	Ընդամենը Սեփական կապիտալ
Մնացորդն առ 1 հունվարի 2021թ.	**200,000**	**(13,368)**	**186,632**
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	50,000		**50,000**
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(29,149)	**(29,149)**
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ.	**250,000**	**(42,517)**	**207,483**

Գործադիր տնօրեն

Տիգրան Բոստանջյան

Գլխավոր հաշվապահ

Աննա Կարապետյան

29 հունիսի 2021թ.

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 10-ից 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Մուտքեր վարկերի և տոկոսների մարումից	181,746	-
Վարկի տրամադրում	(10,487)	-
Ստացված տոկոսներ բանկային հաշիվներից	2,820	308
Բանկային ավանդների մարումից մուտքեր	120,000	-
Բանկային ավանդների ներդրում	(180,000)	-
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(11,968)	(20,057)
*Վճարված վարչական և այլ գործառնական ծախսեր	(19,868)	(6,240)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական	**82,243**	**(25,989)**
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերումից ելքեր	(8,760)	-
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերման համար ելքեր	(5,801)	-
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(14,561)**	**-**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսքեր		
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում	50,000	-
Վարձակալության գծով պարտավորության և տոկոսների մարում	(9,100)	-
Ֆինանսավորման գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**40,900**	**-**
Դրամական զուտ ներհոսք (արտահոսք)	**108,582**	**(25,989)**
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	**6,343**	**32,332**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	-	-
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	**114,925**	**6,343**

Գործադիր տնօրեն

Տիգրան Բոստանջյան

Գլխավոր հաշվապահ

Աննա Կարապետյան

29 հունիսի 2022թ.

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 10-ից 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

2021թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

1.1 Ընդհանուր տեղեկություններ

“ԱՅՈ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 2019թ. հուլիսի 16-ին հիմնադրի որոշմամբ և գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից 2019թ. սեպտեմբերի 26-ին:

Ընկերության

Անվանումը՝	«ԱՅՈ» ՈՒՎԿ ՓԲԸ
Գրանցման համարը՝	49
Գրանցման վկայականը՝	328
Գրանցման ամսաթիվը՝	26.09.2019թ.
Գտնվելու վայրը և գործունեության հասցեն՝	ՀՀ, ք. Երևան, Սարյան փ. 12 շենք, բն. 1
Հարկ վճարողի հաշվառման համարը՝	02814808

Ընկերությունը գործում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին, ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերին, այլ իրավական ակտերին և իր կանոնադրությանը համապատասխան և վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից:

1.2 Կորպորատիվ կառուցվածքը

31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ Ընկերության 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) հատ 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերի 100%-ը պատկանում ՀՀ քաղաքացի Լիլիթ Հակոբի Հակոբյանի:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Ընկերության տնօրենների խորհրդի անդամներն են՝

- Սեյրան Հարությունյան,
- Հայկ Մաղաքյան,
- Երվանդ Պողոսյան:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը, ով հաշվետու է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին:

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացվում է Ընկերության վերստուգողի՝ Զառա Մելքոնյանի կողմից:

Ընկերության աշխատակիցների ցուցակային թվաքանակը 31.12.2021թ. դրությամբ կազմել է 8 (2020թ.՝ 2):

1.3 Գործունեության ուղղությունները

Ընկերությունը որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնում է վարկային կազմակերպության գործունեություն, այն է՝ ներգրավվում է փոխառություններ և (կամ) կնքում Օրենքով սահմանված նմանատիպ գործարքներ և (կամ) տրամադրում վարկեր կամ կատարում Օրենքով սահմանված այլ ներդրումներ:

Ընկերությունը կարող է իրականացնել Օրենքով վարկային կազմակերպությունների համար սահմանված ֆինանսական գործառնություններ, ներառյալ՝

- ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ, բացառությամբ պարտատոմսերի և հրապարակային օֆերտաներով միջոցների ներգրավվման.
- տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.
- տրամադրել երաշխիքներ.
- թողարկել արժեթղթեր, ինչպես նաև իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքներ կատարել.
- մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ.
- մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում.
- գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և մետաղադրամ.
- իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).
- ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.
- մատուցել ֆինանսական խորհրդատվություն.
- ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն.
- ԿԲ համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

Չնայած կանոնադրությամբ նախատեսված գործունեության տեսակների վերը թվարկված առատությանը, Ըներությունը 2021թ. ընթացքում չի իրականցրել ակտիվ գործունեություն՝ COVID-19 համավարակով և այլ հանգամանքներով պայմանավորված: Վերը 1.2 կետում նշված բաժնետիրոջ փոփոխությունից հետո ակնկալվում է ակտիվացնել Ընկերության գործունեությունը:

2. Պատրաստման հիմունքները

2.1 Հայտարարություն համապատասխանության մասին

Սույն ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին («ՖՀՄՍ») համապատասխան պատրաստված Ընկերության երկրորդ տարեկան ֆինանսական հաշվետվություններն են:

2.2 Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են չափման սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

ՀՀ ազգային արժույթը ՀՀ դրամն է, որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

2.4 Գնահատումների և դատողությունների օգտագործումը

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար անհրաժեշտ է, որ ղեկավարությունը կատարի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ,

որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են այդ գնահատումներից տարբեր լինել:

Գնահատումներն ու դրանց հիմքում ընկած ենթադրությունները շարունակական հիմունքով վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումների արդյունքները ճանաչվում են վերանայման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, որոնց վրա ազդում են:

2.5 Ստորագրումը

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2022թ. հունիսի 29-ին՝ Ընկերության գործադիր տնօրեն Տիգրան Բոստանջյանի և գլխավոր հաշվապահ Աննա Կարապետյանի կողմից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

Ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

3.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է, երբ տեղի է ունեցել ապագա տնտեսական օգուտների աճ՝ կապված ակտիվների ավելացման կամ պարտավորությունների նվազման հետ, որը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է, երբ տեղի է ունեցել ապագա տնտեսական օգուտների նվազում՝ կապված պարտավորությունների աճի կամ ակտիվների նվազման հետ, որը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Արդյունքային տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը: Արդյունքային տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունքային տոկոսադրույքը հաշվարկելիս Ընկերությունը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստ: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարքային ռիսկով ճշգրտված արդյունքային տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունքային տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունքային տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման

պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունքային տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստի մասով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունքայի տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունքային տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով: Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունքային տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

3.2 Ֆինանսական գործիքներ

(i) <u>Սկզբնական ճանաչումը և չափումը</u>

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին չափվում է իրական արժեքով՝ գումարած, այն դեպքում, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

(ii) <u>Ապաճանաչումը</u>

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (լրանում է ուժի մեջ լինելու ժամկետը). կամ

բ) այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը ստորև շարադրվածին համապատասխան որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում, կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը

(անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական պարտավորության մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) <u>Հետագա չափումը</u>

Դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, տրամադրած և ստացած վարկերն ու փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը:

3.3 Շահութահարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի գծով ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են՝ ա) գուդվիլից, բ)ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից՝ այնպիսի գործարքի ներքո, որը բիզնեսի միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցված չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի համար ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որ չափով հավանական է, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ

իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում պետք է վերականգնվի այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որն առաջանում է՝

ա) գործարքից կամ իրադարձությունից, որը նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս՝ կա՛մ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կա՛մ ուղղակիորեն սեփական կապիտալում, կամ

բ) բիզնեսի միավորումից:

Ընթացիկ և հետաձգված հարկը ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս, եթե հարկը վերաբերում է այն հոդվածներին, որոնք, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչված են շահույթից կամ վնասից դուրս: Հետևաբար, ընթացիկ և հետաձգված հարկերը, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք նույն կամ տարբեր ժամանակաշրջանում ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում,

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում:

3.4 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

ա) աշխատավարձը,

բ) կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսին է վճարովի տարեկան արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության նպաստը,

գ) պարգևավճարները,

դ) բժշկական ապահովագրության վճարները:

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայության դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Ընկերությունն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումը, կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումը չափվում է այն լրացուցիչ գումարով, որն Ընկերությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

3.5 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի

արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք ակնկալվում է, որ կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է: Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.6 Վարձակալություն. Ընկերությունը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը, որպես վարձակալ, ճանաչում օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ ստորև նշված դեպքերի.

ա) բոլոր կարճաժամկետ (12 ամիսը չգերազանցող ժամկետով) վարձակալությունների (ներառյալ այն վարձակալությունները, որոնց մնացորդային ժամկետը 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ չի գերազանցում 12 ամիսը) և

բ) բոլոր այն վարձակալությունների, որոնց դեպքում վարձակալության առարկա ակտիվը փոքրարժեք է (այսինքն՝ դրա արժեքը նոր վիճակում չի գերազանցում 2,5 միլիոն դրամը):

Վերը «ա» և «բ» ենթակետերում նշված վարձակալությունների գծով վարձակալական վճարները ճանաչվում են ծախս գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում, ինչպես որ նախորդող ժամանակաշրջաններում ճանաչվում էին գործառնական վարձակալությունները:

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի սկզբնական արժեքի մեջ ներառվում են՝

ա) վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափման գումարը, ինչպես նկարագրված է ստորև,

բ) վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ,

գ) վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները:

Մեկնարկի ամսաթվին վարձակալության գծով պարտավորությունը չափվում է այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքի կիրառմամբ, եթե այդ դրույքը հեշտությամբ որոշելի է: Հակառակ դեպքում՝ կիրառվում է վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները բաղկացած են վարձակալության ժամկետի ընթացքում հիմքում ընկած ակտիվի օգտագործման իրավունքի գծով հետևյալ վճարումներից, որոնք մեկնարկի ամսաթվին դեռևս վճարված չեն.

ա) հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսում,

բ) վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից,

գ) գումարները, որոնք ակնկալվում է վճարել վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո,

դ) գնման ընտրանքի իրագործման գին, եթե վարձակալը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ ընտրանքը, և

ե) վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու ընտրանքի իրագործումը:

Մեկնարկի ամսաթվից հետո, վարձակալության գծով պարտավորությունը չափվում է՝

ա) ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալության գծով պարտավորության նկատմամբ տոկոսը,

բ) նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վճարված վարձավճարները, և

գ) վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վերանայումները կամ վարձակալության վերափոխումները:

Յուրաքանչյուր ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորության նկատմամբ հաշվարկված տոկոսը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ չներառված վարձակալության փոփոխուն վճարումները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ պայմանը:

3.7 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչելուց հետո հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ՝ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը, հանած առևտրային զեղչերը և արտոնությունները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում է հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Պահպանման և ընթացիկ սպասարկման, վերանորոգման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

- Համակարգչային տեխնիկա — 3 տարի
- Այլ հիմնական միջոցներ — 5 տարի

4. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Ընկերության ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի մեծության վրա: Գնահատումները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա՝ ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք ողջամիտ են որոշակի հանգամանքներում: Այնուամենայնիվ, այս ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ:

4.1 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային հնացածությունը (մաշվածությունը), հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցման: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Հաշվի են առնված հետևյալ հիմնական գործոնները. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

4.2 Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկումը

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք առկա են ակտիվների հնարավոր արժեզրկվածության (այսինքն՝ փոխհատուցվող գումարը հաշվեկշռային արժեքից պակաս լինելու) հայտանիշներ: Փոխհատուցվող գումարն իրենից ներկայացնում է օգտագործ-ման արժեքից և ակտիվի «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ից առավելագույնը: Նման հայտանիշների առկայության դեպքում իրականացվում է փաստացի արժեզրկումից կորստի հաշվարկ: Արժեզրկված ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ այն ժամանակաշրջանում, որում նվազումը տեղի է ունեցել: Եթե պայմանները փոխվում են, և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքն ավելացել է, նախկինում ճանաչված արժեզրկումն ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմանների ազդեցությունն արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտելի տվյալների հիման վրա:

4.3 Հարկային օրենսդրություն

Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսդրության համապատասխանությունը մեկնաբանու-թյունների առարկա է հանդիսանում, որոնք կատարվում են հարկային մարմինների կողմից: Ընկերության անորոշ հարկային վիճակը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում վերագնահատվում է ղեկավա-րության կողմից: Շահութահարկի գծով պարտավորությունները որոշվում են ղեկավարության կողմից այն չափով, որ չառաջանան հարկային մարմինների կողմից լրացուցիչ պահանջներ հարկերի գծով:

Գնահատականները հիմնված են հարկային օրենսդրության մեկնաբանությունների և ցանկացած հայտնի դատարանի կամ այդ հարցերի գծով պատասխանատու մարմնի որոշման վրա, որոնք ընդունվել են կամ էականորեն ընդունվել են մինչև հաշվետու ժամանակաշրջանը: Տուգանքների, հարկերի (բացի շահութահարկից) գծով պարտավորությունները ճանաչվում են հաշվետու ժամանակաշրջանում՝ պարտավորությունը լուծելու համար անհրաժեշտ ծախսումների գծով ղեկավարության լավագույն գնահատականի հիման վրա:

5. Նոր կամ փոփոխված ՖՀՄՍ-ներ

5.1 Նոր կամ փոփոխված ստանդարտների և մեկնաբանությունների կիրառում

2021 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած և Ընկերության կողմից կիրառված նոր կամ փոփոխված ստանդարտներ չկան:

5.2 Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ՖՀՄՍ-ներ

Հրապարակված, սակայն սույն ֆինանսական հաշվետվություններով ծածկվող հաշվետու ժամանակաշրջանի համար դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտները բերված են ստորև: Այս ցանկն այն հրապարակված ստանդարտների և մեկնաբանությունների ցանկն է, որոնք Ընկերության կանխատեսումներով կօգտագործվեն իր կողմից հետագայում: Հիմնադրամը մտադիր է ընդունել դրանք այն ժամանակ, երբ այդ ստանդարտներն ուժի մեջ կմտնեն:

- *«Հիմնական միջոցներ. մուտքեր նախքան նպատակային օգտագործումը» Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում* (հրապարակվել է 2020թ. մայիսին) պարտադիր կիրառման ենթակա է 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Այս փոփոխություններով արգելվում է հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքից նվազեցնել այն մուտքերը, որոնք ստացվում են հիմնական միջոցի միավորը ղեկավարության մտադրություններին համապատասխան օգտագործվելու համար անհրաժեշտ վիճակի և վայր բերելու ընթացքում արտադրված արդյունքի վաճառքից: Այդ մուտքերը և դրանց հետ կապված ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Փոփոխություններով նաև հստակեցվում է, թե ինչ է նշանակում «ստուգել, թե արդյոք ակտիվն աշխատում է պատշաճորեն». այն է՝ «գնահատել, թե արդյոք ակտիվի տեխնիկական և ֆիզիկական կատարողականն այնպիսին է, որ այն կարող է օգտագործվել արտադրությունում կամ ապրանքների առաքման, կամ ծառայությունների մատուցման մեջ, կամ այլոց վարձով տալու համար, կամ վարչական նպատակներով:

  Փոփոխությունները կիրառվում են հետընթաց, բայց միայն հիմնական միջոցների այն միավորների նկատմամբ, որոնք նպատակային օգտագործման համար պատրաստ են դարձել ներկայացվող ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո: Սկզբնական կիրառման կուտակային ազդեցությունը պետք է ճանաչվի որպես չբաշխված շահույթի (կամ սեփական կապիտալի այլ համապատասխան հոդվածի) սկզբնական մնացորդի ճշգրտում ներկայացվող ամենավաղ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ:

- *«Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանումը» Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում* (հրապարակվել է 2021թ. փետրվարին) պարտադիր կիրառման ենթակա է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Այս փոփոխություններով «Հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների» սահմանումը փոխարինվում է «Հաշվապահական հաշվառման գնահատումների» սահմանումով: Փոփոխություններով նաև հստակեցվում է, թե ինչպես զանազանել հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունը հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունից:

  Ընկերության չի ակնկալում, որ այս փոփոխությունները, էական ազդեցություն կունենան իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ. 2018-2020թթ. ցիկլ»* (հրապարակվել է 2020թ. մայիսին) պարտադիր կիրառման ենթակա է 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Փոփոխություններ են կատարվել հետևյալ ստանդարտներում.
  - *«Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9,*
  - *«Վարձակալություն» ՖՀՄՍ 16,*
  - *«Գյուղատնտեսություն» ՀՀՄՍ 41,*
  - *«ՖՀՄՍ-ների առաջին անգամվա որդեգրումը» ՖՀՍՄ 1*

Ընկերության չի ակնկալում, որ այս փոփոխությունները, էական ազդեցություն կունենան իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

6. Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Տոկոսային եկամուտներ		
Բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	3,170	16,127
Տրամադրված վարկերից	4,235	
Ընդամենը տոկոսային եկամուտներ	**7,405**	**16,127**
Տոկոսային ծախսեր		
Վարձակալական պարտավորությունների գծով	(2,371)	
Ընդամենը տոկոսային ծախսեր	**(2,371)**	**-**
Զուտ տոկոսային եկամուտ (ծախս)	**5,034**	**16,127**

7. Այլ եկամուտներ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Արտարժույթի փոխարկումից օգուտ	598	-
Միջորդավճարներ	227	-
Ընդամենը	**825**	**-**

8. Այլ գործառնական ծախսեր

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Պահպանության ծախսեր	337	-
Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսեր	1,225	-
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	410	-
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	1,283	-
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	135	-
Տույժեր և տուգանքներ	8,500	-
Մինչնորդավճարներ	91	-
Ընդամենը	**11,981**	**-**

9. Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	-	-
Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ)՝ կապված ժամանակավոր տարբերությունների առաջացման և մարման, ինչպես նաև հարկային վնասների հետ (Ծանոթ. 16)	(5,472)	(823)
	(5,472)	**(823)**

Ընկերության կիրառվող հարկի դրույքը 18% է (2020թ.՝18%):

Շահութահարկի փաստացի (արդյունքային) տոկոսադրույքի համապատասխանեցում.

Հազար դրամ	2021թ.		2020թ.	
Շահույթ (վնաս)՝ նախքան հարկումը	**(34,621)**	**%**	**(5,527)**	**%**
Շահութահարկ՝ հարկի կիրառվող դրույքաչափով	(6,232)	18.00	(995)	18.00
Զուտ չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ)	760	(2.2)	172	(3.1)
	(5,472)	**15.8**	**(823)**	**14.9**

10. Դրամական միջոցներ և այլ համարժեքներ

Հազար դրամ	31.12.2021թ.	31.12.2020թ.
Ընթացիկ բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	114,925	6,343
Բանկային հաշվի վրա հաշվեգրված ստացվելիք տոկոս	81	-
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(73)	(4)
Ընդամենը	**114,933**	**6,339**

11. Բանկային ավանդ

Հազար դրամ	31.12.2021թ.	31.12.2020թ.
Բանկերում ներդրված ավանդներ	60,000	-
Բանկային հաշվի վրա հաշվեգրված ստացվելիք տոկոս	265	-
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(6)	-
Ընդամենը	**60,259**	**-**

Դրամական միջոցների օգտագործման որևէ սահմանափակում առկա չէ:

Դրամական միջոցների և այլ համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	*2021թ.*		*2020թ.*	
Դրամական միջոցներ	*12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ*	*Ընդամենը*	*12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ*	*Ընդամենը*
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	4	4	20	20
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(79)	(79)	(16)	(16)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**75**	**75**	**4**	**4**

12. Տրամադրված վարկեր

Հազար դրամ	*2021թ.*	*2020թ.*
Վարկեր ՀՀ-ում գործող վարկային կազմակերպություններին		
Մայր գումար	10,851	160,000
Ստացվելիք տոկոսներ	102	16,570
Համախառն հաշվեկշռային արժեք	**10,953**	**176,570**
12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(214)	(2,012)
Հաշվեկշռային արժեք	**10,739**	**174,558**

Տրամադրած վարկերի հաշվեկշռային արժեքը ենթակա է մարման հաշվետու ամսաթվից հետո 1 տարվա ժամկետում:

13. Վարձակալություն

Հաշվետու տարվա մայիսից Ընկերությունն կնքել է տարածքի վարձակալության պայմանագիր 3 տարի ժամկետով:

Վարձակալությանը վերաբերող հաշվեկշռային արժեքները հետևյալն են.

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հազար դրամ	31.12.2021թ.	31.12.2020թ.
Սկզբնական արժեք	-	-
Ավելացում տարվա ընթացքում	40,543	-
Մաշվածություն	(9,010)	-
	31,533	**-**

Վարձակալությանը վերաբերող՝ շահույթում կամ վնասում ճանաչված գումարները հետևյալն են.

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Վարձակալական պարտավորության գծով տոկոսային ծախս (Ծանոթ. 6)	2,371	-
Տարվա մաշվածություն	9,010	-
Կարճաժամկետ վարձակալությունների գծով ծախսեր	-	-
Փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով ծախսեր	-	-
Փոփոխական վարձավճարների գծով ծախսեր, որոնք չեն ներառվել վարձակալության գծով պարտավորության չափման մեջ	-	-
	11,381	**-**

Վարձակալությանը վերաբերող ընդհանուր դրամական արտահոսքերը հետևյալն են.

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Վարձակալությանը վերաբերող ընդհանուր դրամական արտահոսքերը	(9,100)	

Ստորև ներկայացված են վարձակալության գծով պարտավորություններն ըստ մարման ժամկետների.

	Վարձակալության գծով պարտավորություններ		Վարձակալության գծով պարտավորությունների ներկա արժեք	
Հազար դրամ	31.12.2021թ.	31.12.2020թ.	31.12.2021թ.	31.12.2020թ.
Մինչև մեկ տարի	15,600	-	14,821	-
1-ից 5 տարի	22,100	-	18,992	-
5 տարուց ավելի	-	-	-	-
	37,700	-	33,813	-
Հանած դեռ չկրած ֆինանսական ծախսեր՝	(3,887)	-		
	33,813	-		

Վարձակալության գծով պարտավորությունների զեղչման նպատակով կիրառված վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը 10% է:

14. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Համակարգչային տեխնիկա	Այլ հիմնական միջոցներ	Կապիտալ ներդրումներ	Ընդամենը
Արժեք				
Մնացորդն առ 01.01.2020թ.	-	-	-	-
Ձեռքբերում	-	-	-	-

Մնացորդն առ 31.12.2020թ.	-	-	-	-
Մնացորդն առ 01.01.2021թ.	-	-	-	-
Ձեռքբերում	7,849	317	595	8,761
Մնացորդն առ 31.12.2021թ.	7,849	317	595	8,761
Մաշվածություն				
Մնացորդն առ 01.01.2020թ.	-	-		-
Տարվա մաշվածություն	-	-		-
Մնացորդն առ 31.12.2020թ.	-	-		-
Մնացորդն առ 01.01.2021թ.	-	-	-	-
Տարվա մաշվածություն	478	15	21	514
Մնացորդն առ 31.12.2021թ.	478	15	21	514
Հաշվեկշռային արժեք				
Առ 31.12.2020թ.	**-**	**-**		**-**
Առ 31.12.2021թ.	**7,371**	**302**	**574**	**8,247**

15. Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Արժեք			
Մնացորդն առ 01.01.2020թ.	**-**	**-**	**-**
Ձեռքբերում	-	-	-
Մնացորդն առ 31.12.2020թ.	**-**	**-**	**-**
Մնացորդն առ 01.01.2021թ.	-	-	-
Ձեռքբերում	5,801	-	5,801
Մնացորդն առ 31.12.2021թ.	**5,801**	**-**	**5,801**
Ամորտիզացիա			
Մնացորդն առ 01.01.2020թ.	-	-	-
Տարվա ամորտիզացիա	-	-	-
Մնացորդն առ 31.12.2020թ.	**-**	**-**	**-**
Մնացորդն առ 01.01.2021թ.	-	-	-
Տարվա ամորտիզացիա	51	-	51
Մնացորդն առ 31.12.2021թ.	**51**	**-**	**51**
Հաշվեկշռային արժեք			
Առ 31.12.2020թ.	**-**	**-**	**-**
Առ 31.12.2021թ.	**5,750**	**-**	**5,750**

16. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

16.1 Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները կապված են ստորև նշված հոդվածների հետ.

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
Հազար դրամ	31.12.21	31.12.20	31.12.21	31.12.20	31.12.21	31.12.20
Դրամական միջոցներ	-	-	(194)	(11)	(194)	(11)
Բանկային ավանդ	-	-	(107)	-	(107)	-

Վարկեր	19	45	-	-	19	45
Արձակուրդային պահուստ	277	73	-	-	277	73
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	-	-	(5,676)	-	(5,676)	-
Վարձակալության գծով պարտավորություն	6,086	-	-	-	6,086	-
Հարկային վնաս	7,790	2,616	-	-	7,790	2,616
Զուտ հարկային ակտիվ (պարտավորություն)	**14,172**	**2,734**	**(5,977)**	**(11)**	**8,195**	**2,723**

16.2 Փոփոխություններ ժամանակավոր տարբերություններում

Հազար դրամ	**01.01.20թ.**	**2020թ.-ին ճանաչված շահույթում կամ վնասում**	**31.12.20թ.**
Դրամական միջոցներ	(55)	44	(11)
Վարկեր	73	-28	45
Արձակուրդային պահուստ	14	59	73
Հարկային վնաս	1,868	748	2,616
	1,900	**823**	**2,723**

Հազար դրամ	**01.01.21թ.**	**2021թ.-ին ճանաչված շահույթում կամ վնասում**	**31.12.21թ.**
Դրամական միջոցներ	(11)	(183)	(194)
Բանկային ավանդ	-	(107)	(107)
Վարկեր	45	(26)	19
Արձակուրդային պահուստ	73	204	277
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	-	(5,676)	(5,676)
Վարձակալության գծով պարտավորություն	-	6,086	6,086
Հարկային վնաս	2,616	5,174	7,790
	2,723	**5,472**	**8,195**

17. Պահուստներ և այլ պարտավորություններ

Հազար դրամ	**2021թ.**	**2020թ.**
Պահուստներ արձակուրդայինների գծով	1,538	403
Պարտավորություն հարկերի գծով	-	-
Այլ պարտավորություններ	1,403	585
Ընդամենը	**2,941**	**988**

Պահուստներն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներն են՝ տարեկան արձակուրդների տեսքով փոխհատուցելի բացակայությունների գծով: Պահուստավորումը կատարվում է յուրաքանչյուր տարեվերջի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդի համեմատությամբ աճի կամ նվազման գումարով՝ ճշտելով անձնակազմի գծով ծախսումները: Ակնկալվում է, որ դրամական արտահոսքերը տեղի կունենան հաջորդ տարվա ընթացքում՝ հերթական ամենամյա արձակուրդներն օգտագործելիս: Ձեղչման ազդեցությունը համարվել է ոչ էական, և պահուստը չափվել է գնահատված դրամական արտահոսքերի անվանական գումարով:

18. Կանոնադրական կապիտալ

Հաշվետու տարում միակ բաժնետիրոջ կողմից տեղի է ունեցել կապիտալի համալրում 50,000 հազար դրամ, որի արդյունքում Ընկերության հայտարարված, թողարկված և լրիվ վճարված կանոնադրական կապիտալն առ 31 դեկտեմբերի 2021թ. կազմում է 250,000 հազար դրամ: Վերջինս կազմված է 250,000 հատ 1000 դրամ անվանական արժեքով հասարակ անվանական բաժնետոմսերից:

19. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24-ի՝ «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա միակ բաժնետերը, գործադիր տնօրենը, ինչպես նաև նրանց կողմից վերահսկվող կամ կառավարվող կազմակերպությունները:

Ընկերությունը մայր ընկերություն չունի: Ընկերության բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթ. 1–ում:

Հատուցում ստացած առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը եղել է հետևյալը.

Հազար դրամ	**2021թ.**	**2020թ.**
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ (աշխատավարձ և արձակուրդային)	4,226	16,479
Ընդամենը առանցքային ղեկավար անձնակազմի գծով հատուցումներ	**4,226**	**16,479**

20. Կապիտալի կառավարում

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակն այն է, որ Ընկերությունը համապատասխանի հաստատված արտաքին պահանջներին, և որ Ընկերությունը պահպանի բարձր վարկային վարկանիշ և կապիտալի բարձր նորմատիվներ՝ իր գործունեությունն ամրապնդելու և բաժնետերերի շահույթն առավելագույնի հասցնելու նպատակով: Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը՝ կատարելով ճշգրտումներ, որոնք առաջանում են տնտեսական պայմանների և ռիսկի բնույթի փոփոխության հետևանքով:

Ընկերության կապիտալի մեծության նկատմամբ պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ կողմից: Համաձայն ՀՀ ԿԲ կողմից հաստատված նորմատիվ իրավական ակտերի պահանջների՝ Ընկերության ընդհանուր կապիտալի և կանոնադրական կապիտալի նվազագույն չափը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է կազմի 150,000 հազար դրամ: Ընդհանուր կապիտալն Ընկերության հիմնական և լրացուցիչ կապիտալների հանրագումարն է՝ համապատասխան նվազեցումները կատարելուց հետո: Հիմնական կապիտալը ներառում է կանոնադրական կապիտալը, չբաշխված շահույթը (վնասը) և գլխավոր պահուստը: Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում պահպանել է ՀՀ ԿԲ կողմից սահմանված կապիտալին վերաբերող բոլոր պահանջները:

21. Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում

21.1 Ընդհանուր ակնարկ

Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանությունը, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համախմբության որոշակի մակարդակի վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անխուսափելի հետևանքն է: Այդուհանդերձ, Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունը: Շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Ընկերությունը:

21.2 Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակը և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող տոկոսադրույքների ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով: Ընկերությունում ռիսկերի կառավարումն իրականացնում է Ընկերության ղեկավար անձնակազմը: Ղեկավարությունը գնահատում է ֆինանսական ռիսկերը՝ սերտորեն համագործակցելով Ընկերության գործառնական միավորների հետ՝ դրանց մեղմացմանն ուղղված գործառույթներն իրականացնելու նպատակով:

21.3 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորություններն Ընկերության նկատմամբ:
Ընկերությունը կառավարում, սահմանափակում և վերահսկում է ցանկացած բացահայտված պարտքային ռիսկի կենտրոնացում՝ մասնավորապես, մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև տնտեսության ճյուղերի և աշխարհագրական սեգմենտների կտրվածքով:

21.4 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

21.5 Աշխարհագրական կենտրոնացումներ

2021 թվականին Ընկերության պարտքային ռիսկերն ամբողջությամբ կենտրոնացված են եղել ՀՀ-ում:

Գործունեության ոլորտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պարտքային ռիսկի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ գործունեության ոլորտների:

Հազար դրամ	**2021թ.**	**2020թ**
Դրամական միջոցներ և այլ համարժեքներ (Ծանոթ. 10)	114,933	6,339
Բանկային ավանդներ (Ծանոթ. 11)	60,259	
Վարկեր (Ծանոթ. 12)	10,739	174,558
Ընդամենը	**185,931**	**180,897**

21.6 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների իրական արժեքի կամ դրանից ստացված դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների փոփոխությունների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության չափն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Ընկերությունը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքների ժամկետայնության և արտարժույթի դիրքերի գծով, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում են:

i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում:

Ղեկավարությունը չունի ֆորմալ քաղաքականություն՝ որոշելու, թե Ընկերությունը որքանով պետք է ենթարկված լինի փոփոխական, և ինչքանով ֆիքսված դրույքներին: Այնուամենայնիվ, նոր փոխառությունների ձեռքբերման կամ տրամադրման դեպքում ղեկավարությունն օգտագործում է իր դատողությունը, որպեսզի որոշի, թե մինչև մարումն ընկած ակնկալվող ժամկետում Ընկերության համար որը կլինի առավել նպաստավոր՝ փոփոխական թե ֆիքսված տոկոսադրույքը:

ii) Արժութային ռիսկ

Արտարժութային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը չունի արտարժույթով արտահայտված ակտիվներ կամ պարտավորություններ և ենթարկված չէ արտարժութային ռիսկին:

21.7 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Ընկերության իրացվելիության վերահսկողությունը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ինչպես նաև ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել իրացվելիության հաշվեկշռային գործակիցները: Իրացվելիության կառավարման հետ կապված Ընկերության մոտեցումն է. որքան հնարավոր է, ունենալ բավարար իրացվելի միջոցներ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու համար՝ ինչպես նորմալ, այնպես էլ լարված պայմաններում՝ առանց իր համբավը ռիսկի ենթարկելու և առանց անընդունելի վնասներ կրելու:

21.8 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկն ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Ընկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ և արտաքին գործոն-ներից՝ բացառությամբ պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:
Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակու-թյան կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ: Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմ-նական պատասխանատվությունը կրում է Ընկերության գործադիր մարմինը: Այս պատասխանատվու-թյունն ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում.

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում՝ գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և կորուստների նվազեցման առաջարկվող գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշների մշակում և կիրառում:

21.9 Իրական արժեքներ և հաշվեկշռային արժեքներ

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորու-թյունների հաշվեկշռային և իրական արժեքները մոտավորապես նույնն են:

22. Պայմանական դեպքեր և հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

22.1 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Տեղի է ունեցել կանոնադրական կապիտալի համալրում միակ բաժնետիրոջ կողմից 50,000 հազար դրամ, որից հետո Ընկերության հայտարարված, թողարկված և լրիվ վճարված կանոնադրական կապիտալը կազմել է 300,000 հազար դրամ:

22.2 Դատական գործեր

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ներգրավված չի եղել որևէ դատական գործում՝ թե՛ որպես հայցվոր, թե՛ որպես պատասխանող:

22.3 Հարկային անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում դեռևս աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարընթերցում-ների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Ընկերության հարկային հաշվարկներն ու հայտարարագրերը և իրավունք ունեն տույժ-տուգանքներ նշանակելու: Որևէ ժամանակաշրջանի համար

ոչ ճիշտ հարկային հաշվետվություն ներկայացնելու տարվան հաջորդող երեք տարին լրանալուց հետո այլևս նոր հարկային պարտավորություններ՝ ներառյալ տույժեր և տուգանքներ, չեն կարող առաջանալ: Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և, եթե հարկային մարմինները կարողանան պարտադրել իրենց մեկնաբանությունները, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

22.4 Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ, երաշխիքներ, երաշխավորություններ և այլ ֆինանսական պայմանագրեր

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը տրամադրած երաշխիքներ, երաշխավորություններ և հետհաշվեկշռային ռիսկեր պարունակող այլ ֆինանսական գործիքներ չունի:

Գործադիր տնօրեն
Տիգրան Բոստանջյան

Գլխավոր հաշվապահ
Աննա Կարապետյան

29 հունիսի 2022թ.